

**ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ
ԳՐ. ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՄԱՏՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ» ՊՈՆԵՍՈՒՄ
Գրքիկյան Լ. Հ.**

Հոդվածում ուսումնասիրվում են նարեկացիական նորաբանությունների դերը պատկերավորման միջոցներում և դրանց ոճական արժեքը: «Մատյան ողբերգության» պոեմի լեզվում պատկերավորման միջոցները բանաստեղծի ոճը հատկանշող լեզվական միավորներ են, որոնք ծառայում են գեղարվեստական որոշակի խնդիրների լուծմանը: Նարեկացու բառապաշարի նորաբանությունների ուսումնասիրման չափանիշը ոչ միայն դրանց կազմության ճշտությունն է, այլև բառապաշարում ունեցած գեղարվեստական-ոճական գործառության և արժեքի գնահատումը:

Բանալի բառեր. Նարեկացի, նորաբանություն, մակդիր, հակադրություն, չափազանցություն, օբսիմորոն, լեզվաոճական, պատկերավորման միջոց, համեմատություն:

Եւ թեպէտ վախճան ընկալայց իբր գմահացու,
Այլ յարակայութեամբ բանի այսր սոփերի
Գրեցա՛յց կենդանի: (Բան 2Ը, (բ) 512)

Ու թեպէտ որպէս մի մահկանացու՝ պիտի վախճանվեմ, Բայց այս մատյանի հարակայությամբ կմնամ անմահ: (Բան 2Ը, (բ) 527)

Այս մատյանի «հավիտենական արյուն» լինելու գաղտնիքներից մեկն էլ լեզուն է:

Արիստոտելը հայտնի «Պոետիկայում» գրում է. «...Պոետը պատմաբանից տարբերվում է նրանով, որ մեկը պատմում է իրապէս կատարվածի, իսկ մյուսը՝ ամեն հնարավորի մասին:

Դրա համար էլ պոեզիան պատմությունից ավելի փիլիսոփայական է և խոր...» [2]: Այս տրամաբանությունից ելնելով ենք անդրադառնում

Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի լեզվի քննությանը հեղինակային նորաբանությունների ոճական կիրառության առումով՝ նկատի առնելով այս «հրաշակերտի» առանձնահատկությունը: Այն միայն գեղարվեստական երկ չէ, և նրա մյուս արժանիքներն ու առանձնահատկությունները գումարվում են գեղարվեստական յուրահատկություններին՝ ի մի բերելով գեղարվեստական գրականության և պատմության փիլիսոփայությունը: Եվ այս հարցում անգնահատելի է պատկերավոր խոսքի դերը:

Եթե գրողի լեզվի, առհասարակ գեղարվեստական լեզվի հիմնական յուրահատկություններից մեկը, եթե ոչ ամենահիմնականը, անհատականությունն է, ապա այն սկիզբ է առնում հենց բառերի գործածությունից, պատկերների ստեղծումից: Լեզուն ունի պատկեր ստեղծելու բազմաթիվ միջոցներ: «Պատկերի ստեղծման հիմքում ընկած է առարկայի, գործողության, հատկության անմիջական, ուղղակի անվանման փոխարեն կողմնակի, ոչ անմիջական միջոցների, անվանումների օգագործումը», - իրավացիորեն նկատում է լեզվաբանը [3]:

Հայտնի է, որ պատկերավորությունը գեղարվեստական խոսքի, մասնավորապես՝ բանաստեղծական խոսքի ամենաբնորոշ կողմն է, գեղարվեստական լեզվի հիմնական առանձնահատկությունը: Գրողը խոսում-պատմում է պատկերներով, և այս հիմքի վրա ստեղծվում է պատկերավորման միջոցների մի ամբողջական համակարգ, որ մյուս ոճերին բնորոշ չէ կամ քիչ է բնորոշ: Պատկերավորության միջոցների ճաշակով ընտրությունը, վարպետ գործածությունը գրողի խոսքը դարձնում են գեղեցիկ, հուզական, ազդեցիկ, նպատակասլաց: Կատարյալ պատկերներ ստեղծելու համար անհրաժեշտ են վառ երևակայություն, ինքնատիպ լեզվագագացողություն: Մեզ հետաքրքրեց Հ. Հարությունյանի ուշագրավ վերլուծությունը Մարկեսի վկայության վերաբերյալ. «Պատկերը: Հիմքում միշտ կա մի պատկեր...Պետք է ասեմ, որ պատկերների մի հսկայական շտեմարան ունեմ, որոնք սկսել են, այսպես ասած, իմաստավորվել ու թանձրանալ...», և ապա եզրակացնում, «Թե պոեզիան պատկերավոր մտածողություն է» [3]: Այս բնութագրումը միանգամայն բնորոշ է Նարեկացու գեղարվեստական խոսքին:

Այո՛, «Նարեկը» լեզվական բարձր արվեստով, ոճերի բազմազանությամբ, իրականությունը տեսնելու նարեկացիական եղանակով, գույնով, ձայնով, արտահայտչական նոր ձևերի ու

պատկերավորման միջոցների թարմությամբ արժևորվող գեղարվեստական երկ է: Գևորգ Ջահուկյանի գրքում կարդում ենք, որ դեռևս հնդեվրոպական շրջանում լեզվի բառապաշարը տարբերակված է եղել, նաև հարուստ՝ պատկերավորման միջոցներով [4], հետևաբար հարցը գալիս է պատմությունից: Նաև նշենք, որ 5-րդ դարում առաջին անգամ կատարվել է ոճաբանական դասակարգում, որի ներքին բովանդակությունը Հր. Աճառյանը համարում է լեզվի ճոխությունը, ասելիքի կանոնավորությունը, հոմանիշների առատությունը, քերականական կանոնների միօրինակությունը, դարձվածքների վայելչությունը և այլն:

Այս համատեքստում էլ առանձնանում են հատկապես լեզվի բառապաշարի մեջ անընդհատ ստեղծվող նոր բառերը, որոնք լեզվի զարգացման տվյալ փուլում կոչվում են նորաբանություններ: Գիտենք, որ նոր բառերի ու իմաստների առաջացումը կատարվում է երկու եղանակով՝ բառային և իմաստային: Նոր բառեր կազմելու հայերենի գրեթե անսպառ հնարավորությունները առանձին կենսունակությամբ դրսևորվել են հայ հին ու նոր շրջանի գեղարվեստական գրականության մեջ: Անհատական նորաբանությունները մեծ հետաքրքրություն են ներկայացնում լեզվաոճական քննության առումով և առավելագույնս են արտահայտում հեղինակային աշխարհագրագոյությունը, աշխարհընկալումն ու ճանաչումը, նաև վերաբերմունքն այդ ամենի հանդեպ:

Տվյալ դեպքում խոսքը Նարեկացու կերտած բառերին է վերաբերում, որոնք առանձնացված և մատնանշված են Վարազ Առաքելյանի՝ Գր. Նարեկացու լեզվին ու ոճին նվիրված աշխատության մեջ [1]: Ըստ հեղինակի, որը նշում է, որ Նարեկացին 700-750 նոր բառ է կերտել, դրանց նորակազմություն լինելը հաստատված է «Հայկազյան բառարանի» տվյալներով: Մենք օգտվել ենք լեզվաբանի տվյալներից՝ ելնելով մեր նպատակից՝ անդրադառնալ այդ բառերի ոճական դերին, քանի որ հեղինակը բանաստեղծի կերտած բառերի աննախադեպ առատությունը բացատրում է ոճական շարժառիթով:

Նարեկացու բանաստեղծական լեզվի հարստությունն են կազմում դիպուկ **մակդիրները**, որ լեզվի պատկերավորության կարևոր գործոններից են: Ինչպես հայտնի է, մակդիրը ոճական այնպիսի հնարք է, որի միջոցով տրվում է առարկայի, երևույթի կամ գործողության ոչ թե հիմնական ու բնորոշ հատկանիշը, այլ նրա գեղագիտական բնութագրությունը՝ զուգորդված հեղինակի կամային-վերաբերական

նրբերանգներով: Մակդիրը բնորոշում է առարկան կամ գործողությունը և նրանցում ընդգծում է ինչ-որ էական հատկություն, որակ: Մակդիրի ոճական դերը նրա գեղարվեստական արտահայտչականությունն է: Այլ բնորոշմամբ՝ «մակդիրը առարկան կամ երևույթը գեղագիտորեն բնութագրող որոշիչ է, որի հիմքում ընկած է փոխաբերական իմաստ» [5]: Սա ճշմարիտ է, սակայն դիտարկենք գործածություններ, որոնցում բացահայտվում է մեծի բառակերտության դրդապատճառը՝ ոճաստեղծ դերը, ինչպես՝

Այլ հոտոտեսցի՛ս, հայեսցի՛ս, գթած,
Քան ի պատարագն **բոլորապտուղ**,
Մատուցեալ ծխոյն բարդութեան:
Ընկա՛լ զսակաւամասնեայ յաղուածս բանից
Քեզ ի հաճութիւն և մի՛ ի բարկութիւն: (Բան Ա, 7)

Աշխարհաբարյան հատվածում ևս բառի տարողունակությունը խիստ զգալի է:

Սակայն կնայես նրան, ո՛վ գթած,
Ու կհոտոտես ավելի սիրով,
Քան պատարագն այն **բոլորանվեր**,
Որ մատուցվում էր ծխով թանձրաբարդ... (Բան Ա, 5-6)

Նկատենք, որ **բոլորապտուղ** նորակերտը բովանդակային առումով խիստ տարողունակ է: Դա պահպանվում է նաև թարգմանական տարբերակում:

Գրգեալ տրտնջող, փափկացեալ փախստական,
Սեղանանենգ սարտուցեալ, անպատասխանի վնասապարտ,
Քաղցրասնոյց հայհոյիչ, զաւակ հայրատեաց,
Կտակարանացն մատնիչ, Մովսեսի չարախաւս
Տմարդի յղփացեալ, **բազմավրեպ** հանճարեղ: (Բան ԽԸ (բ) 269-270)

Առանձնապես հետաքրքրական է օրինակը, որտեղ օգտագործված **քաղցրասնոյց** մակդիրը նաև դիտվում է որպես օքսիմորոն՝ շարակցվելով **հայհոյիչ** բառին: Իսկ **սեղանանենգ** բառը կարող է փոխարինել մի ողջ նկարագրության:

Ոճական հնարքների կուտակումը առավել արտահայտիչ է դարձնում խոսքը և բնավ չի ծանրաբեռնում: Մակդիրների իմաստը շեշտվում է նաև հակադրությամբ՝ **արջնատես** ագռաւ և **սպիտականիջ** աղաւնի (Բան ԼԱ (դ), 183):

Վերոհիշյալ օրինակներում **արջնատես** և **սպիտականիշ** նորաբանությունները ոչ միայն նկարագրում են ագռավի և աղավնու փետրավորումը, այլև բնութագրում են նրանց. ագռավը արջնատես է (մութ), այսինքն՝ չար, իսկ աղավնին՝ սպիտականիշ, այսինքն՝ բարի:

Լեզվի խնայողության օրենքով՝ Նարեկացին մի քանի բառով իմաստային-բովանդակային ծավալուն հարցեր է լուծում: Նարեկացու գեղարվեստական խոսքի կարևոր միջոցներից մեկն էլ **համեմատությունն** է: «Համեմատությունը ոճական դարձույթ է, որը երկու առարկաների կամ երևույթների համադրման միջոցով մեկը բնորոշում է մյուսի օգնությամբ՝ նրանց նմանության կամ տարբերության հիման վրա» [5]:

Նարեկացու պոեմի լեզվում համեմատությունների կազմությանը գործուն մասնակցություն են ունենում հեղինակային նորաբանությունները: Համեմատությունը խոսքին պատկերավորություն հաղորդում է, եթե թարմ է, նոր է, ուշագրավ, ինչպես՝

...Վասն որոյ, ընդ առաջանումն միշտ փաղաքշեալ,

Հանապազ խնդայ սատանայ,

Իսկ երկրորդան, ըստ նմանութեան լափլիզող,

դժոխորովայն գազանի,

Իբր կերակրով՝ արեամբ պարարի: (Բան Ժ(ա), 56-57)

Այս օրինակում ներկայացվում է չարը՝ սատանան. այն **դժոխորովայն գազան** է, որը հագենում է արյամբ՝ իբրև կերակուր: **Դժոխորովայն** նորակերտը բովանդակային-ոճական առումով ոչ միայն նոր, այլև շատ տարողունակ և պատկերավոր է, իսկ համեմատության կազմում նրա առաջացրած վերաբերմունքը պարզապես անգուգական է, ազդու, տպավորիչ:

Նարեկացու պոեմում **չափազանցությունը** և **նվազաբանությունը** լայն գործածություն չունեն, բայց քիչ կիրառությունների դեպքում էլ դրանք հանդես են գալիս որպես տրամադրություններ ու ապրումներ անդրադարձնող ոճական կարևոր հնարքներ: Չափազանցության ամենադիպուկ տեսակը դեռևս սահմանազանցումն է (գրոտեսկ): Հայտնի է, որ ոճական այս հնարքը՝ չափազանցության ծայրահեղ աստիճանն է: Ահա Նարեկացու մեծ երևակայությամբ և չափազանցական թռիչքով ստեղծած հատվածը, որի մեջ նորակերտ բառը խիստ բնորոշ արժեք ունի:

Եւ արդ, զի՞նչ արժանաւոր ըստ քեզ
բամբասանս շարագրեցից
Ի կտակ մաղթանաց մատենի
այսր ողբերգութեան,
Ո՛վ անձն իմ թշուառ, *ամենապատկառ*
Եւ առ պատասխանիս բանից անբարբառ,
Անպիտան Աստուծոյ եւ
Սրբոցն մասնակցութեան: (Բան Թ (ա), 51)

Վ. Գևորգյանը թարգմանում է *խապառ-անպատկառ*:

Նարեկացու խոսքը հարուստ է նաև **հակադրություններով**:

Գիտենք, որ հակադրությունը իմաստով հակադիր բառերի կամ արտահայտությունների գուգորդմամբ ստեղծվող ոճական բանադարձում է [5]: Գեղարվեստական խոսքի այս միջոցը Նարեկացին օգտագործում է ամենալայն չափերով: Բարդ հոգեկան վերելքներն ու փլվածքները, դառնագին իրականության և իր ձգտման տարբերությունները բանաստեղծն արտահայտել է այնպիսի հակադրություններով, որոնք իրականության երևույթները բացահայտում են իրենց բոլոր նրբություններով, թանձրությամբ. դրանք միաժամանակ հուզիչ են, վարակիչ իրենց հարուցած ողբերգական ապրումներով:

Դա հասկանալի է, քանի որ հակադրության միջոցով ներկայացվում են հակադիր առարկաներ, երևույթներ, հատկանիշներ, հոգեվիճակներ՝ ուժեղացնելով և ավելի ցայտուն դարձնելով դրանք: Ահա ամենաազդեցիկ հակադրություններից մեկը ընդհանրապես գրականությունների պատմության մեջ:

Ըմպանակք երկու յերկոսին ձեռին,
Մինն՝ *արեամբ*, եւ միւսն՝ *կաթամբ*,
Երկու բուրանոցք կայծակնաւորք,
Մինն՝ *խնկով*, եւ միւսն՝ *ճենճերիւ*,
Սկաւառակք կրկին կրաւորականք համոց,
Մինն՝ *քաղցու*, եւ միւսն՝ *դառնութեամբ*... (Բան Լ (գ), 174)

Ինչպես նկատում ենք, բերված օրինակում նորակերտ բառեր չկան, սակայն հակադրվող եզրերը, գուգորդումներ են բոլորովին նոր ու անակնկալ: Սրանք կարելի է համարել շարահյուսական նորաբանություններ, որոնք ոճական-բովանդակային առումով անչափ տպավորիչ են ու պատկերավոր:

Երբ խոսքի տարբեր եզրերն են իրար հակադրվում, նկարագրվող երևույթները առավել ցայտուն են հանդես գալիս իրենց բոլոր կողմերով, նրբություններով: Ավելի ցայտուն է, երբ դա կազմվում է որևէ հակադրական բառով: Օրինակ՝ Խոնարհություն՝ յամբարհաւաճութեան, ճշմարտութիւն՝ ի ստութեան, Միամտութիւն՝ ի մանկութեան, Անբծութիւն՝ **յայլամտութեան**, Բարարություն՝ ի չարութեան, Պարկեշտութիւն՝ ի լկտութեան... (Բան ԼԱ, 184)

Նարեկացին փնտրում է խոսքի սուր հակադրություններ, որոնք անսպասելի և հանկարծակի լինեն, որովհետև զգացմունքների հակասությունը հնարավոր է միայն խոսքի այս տիպի հակադրությամբ արտահայտել, այսինքն՝ հակադրությունը ստեղծվում է ոչ թե տարբեր առարկաների ու երևույթների միջև, այլ հակադրություն միևնույն անձի տարբեր վիճակների միջև, և այդ ամբողջը համարյա միաժամանակ է հանդես գալիս: Ստեղծվում է մի տեսակ օքսիմորոն, որտեղ հակադիր հատկանիշները հայտնվում են միևնույն անձի կամ երևույթի մեջ: Այս դեպքերում էլ առաջանում են շարահյուսական նորաբանություններ, որոնք շատ դիպուկ ու պատկերավոր են դարձնում խոսքը, ինչպես՝

Մի՛ լիցի ինձ երկնել, եւ ոչ ծնանել,
Ողբալ, եւ ոչ արտասուել,
Խորհել, եւ ոչ հառաչել,
Ամպել, եւ ոչ անձրելել,
Ընթանալ, եւ ոչ հասանել,
Ինձ ձայնել, եւ քեզ ոչ լսել,
Պաղատիլ, եւ անտես մնալ,
Կողկողիլ, եւ ոչ ողորմիլ,
Աղաչել, եւ ոչ ինձ աւգտել
Զոհել, եւ ոչ ճենճերել,
Զքեզ տեսանել, եւ դատարկ ելանել: (Բան Բ(գ), 15)

Դեպի Բարձրյալը ձգտելու, նրան ձուլվելու անձնական և համամարդկային տվայտանքները, համայն մարդկությանը ծառայելու և նրանից երբեք չհրաժարվելու պատրաստակամությունը ներքին բախումների ավելի ցնցող դրսևորում չունի գեղարվեստական խոսքի որևէ այլ հորինվածքում: Ընդհանրապես Նարեկացու պոեմի լեզվում պատկերավորման միջոցները ծառայում են գեղարվեստական որոշակի խնդիրների լուսաբանմանը և բանաստեղծի ոճը հատկանշող լեզվական միավորներ են:

СТИЛИСТИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ АВТОРСКИХ НЕОЛОГИЗМОВ В
ПОЭМЕ ГР. НАРЕКАЦИ «КНИГА СКОРБНЫХ ПЕСНОПЕНИЙ»

Гркикян Л. О.

В статье рассматривается роль авторских неологизмов Григора Нарекаци в изобразительных средствах языка и их стилистическое значение. В «Книге скорбных песнопений» изобразительные средства являются единицами, указывающими на индивидуальный стиль автора. Они служат для решения определенных художественных задач. Критерием изучения авторских неологизмов Нарекаци является не только точность их образования, но и оценка их художественно-стилистической функции и значения в составе словаря.

Ключевые слова: Нарекаци, неологизм, эпитет, антитеза, гипербола, оксюморон, лингвостилистический, изобразительные средства, сравнение.

STYLISTIC VALUE OF AUTHOR NEOLOGISMS IN GR. NAREKATSI'S
"BOOK OF LAMENTATIONS"

Grkikyan L. H.

The article discusses the role of author neologisms of Grigor Narekatsi used in expressive means of language and their stylistic value. In the "Book of Lamentations", expressive means are language units indicating author's individual style, which serve to convey certain artistic meaning. The criterion for studying the author neologisms of Narekatsi is not only the accuracy of their composition but also their expressive and stylistic value in vocabulary.

Keywords: Narekatsi, neologism, epithet, antithesis, hyperbole, oxymoron, linguostylistic, expressive means, comparison.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Առաքելյան Վ. Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը: Երևան: Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ.: 1975: էջ 40:
2. Արիստոտել Պոետիկա: Երևան: Հայպետհրատ: 1955: էջ 164:
3. Հարությունյան Հ. Գեղարվեստական խոսք: Երևան: «Սովետական գրող» հրատ.: 1986: 133 էջ:

4. Ջահուկյան Գ. Հայոց լեզվի պատմություն: Նախագրային շրջան: Երևան: ՀԽՍՀ ԳԱ հրատ.: 1987: Էջ 157:
5. Ջահուկյան Գ., Խլղաթյան Ֆ. Հայոց լեզվի ոճաբանություն: Երևան: «Զանգակ» հրատ.: 2007: Էջ 9:
6. Գր. Նարեկացի «Մատենան ողբերգութեան»: Երևան: Հայաստանի Աստվածաշնչային Ընկերություն: 2016: Էջ 527: 7: 269-270: 83: 56-57: 51: 174: 184: 15:
7. Գր. Նարեկացի «Մատյան ողբերգության», թարգ.՝ Վ. Գևորգյանի: Երևան: «Սովետական գրող» հրատ.: 1979: Էջ 512: 5-6:

Տեղեկություններ հեղինակի մասին

Գրքիկյան Լ. Հ. – ուսուցչուհի

Գյումրու թիվ 1 ավագ դպրոց

Էլ. փոստ grkikyanlala@gmail.com

Տրվել է խմբագրություն 19.10.2019